# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՅԱՑԵԼ ԵՆ

Հայաստանի տարածքում գտնվող ղարաբաղցիները քվեների 89,4%-ը տվել են ԼՂՀ նախագահության թեկնածու Արկադի Ղուկասյանին։

Հայաստանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներկայացուցիչ Նաիրա Մելքումյանի խոսքերով, այս ընտրություններին մասնակցել են 1,5%-ով ավելի շատ ընտրողներ, քան ԼՂՀ առաջին նախագահի ընտրություններին։ Նրա խոսքերով, երեք զինծառայողների սպանությամբ ընտրությունները խափանելու Ադրբեջանի փորձը հակառակ ազդեցություն ունեցավ։ «Ժողովուրդը իր վստահությունը հայտնեց նախագահին եւ նրա հետ կապեց ապագայի իր հույսերը»,- հայտարարեց նա։

ԼՂՀ նախագահական ընտրությունների Հայաստանի տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Գեղամ Մուրադյանը նշեց, որ ընտրական հանձնաժողովն աշխատում էր ոչ միայն Երեւանի տարածքում, այլ նաեւ Մասիսում, Արզնիում, Վարդենիսում, Չարենցավանում եւ Աբովյանում։ Ընդհանուր ցուցակում ընդգրկված 2891 մարդուց ընտրություններին մասնակցել է 2147-ը։ Նրանց թվում հանրապետությունում մշտական ապրող գետաշենցիներն ու շահումյանցիները, ի լրումն նրանց ընդհանուր ցուցակում չգրանցված 302 ուսանողներ եւ գործուղվածներ։ Անվավեր են ճանաչվել ընդամենը 26 քվեաթերթիկներ։